ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 153

ք. Երևան 02.12.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 04.05.2023թ. կնքված N ՓՊՄԱՊՁԲ-23-7/28-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 2023 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 31.10.2023թ, պետք է մատակարարեր համապատասխանաբար 10000-ական զույգ ապրանք, ընդհանուր՝ 30000 զույգ: 2023 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում նախատեսված մատակարարման ենթակա ապրանքի տարբեր խմբաքանակներ 3 անգամ Ընկերության կողմից մատակարարվել են, սակայն չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական պայմաններին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) և «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 2023 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում նախատեսված 20000 զույգ ապրանքի մասով:

Հաշվի առնելով, որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ « Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ